

ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՄԱԳՄԱՆ ՀԱՐՑԸ

Ա. Հ. ԱՄԵՋՅԱՆ

Ծագմամբ պատկանելով հնդեվրոպական լեզուների մեծ ընտանիքին՝ հայերենի քերականական կառուցվածքի հիմքերը կապված են հնդեվրոպական հիմնալեզվի և հնդեվրոպական հին լեզուների ձևերի հետ:

Հնդեվրոպական թայի խոնարհման մեջ մեծ դեր էին կատարում թայերի տարբեր հիմքերը:

Հնդեվրոպական նախալեզվի բազմաթիվ քներից (թեմա) հայերենը պահպանել է միայն 2 բուն՝ ներկայի և կատարյալի (aoriste)՝ նոր պարսկերենի, նոր հունարենի և լատիներենի նման:

Այս քները ունեն կերպային հակադրություն. ներկայի բունը ցույց է տալիս տևական, շարունակական գործողություն, ինչպես գրեմ, գրէի, գրիցեմ, (գրում եմ, գրում էի, գրելու եմ), իսկ անցյալի բունը՝ ավարտված, կատարված գործողություն, ինչպես գրեցի, գրեցից (գրեցի, գրեմ, կգրեմ)՝:

Ներկայի հիմքի ածանցները կատարյալում և կատարյալի հիմքից կազմվող ձևերում դուրս են ընկնում. օրինակ՝ տես-ան-ես—տես-ի, մեղ-անչ-ես—մեղ-ա (խոսքը չի վերաբերում բազմապատկական կերպածանցներին):

Ամենայն հավանականությամբ ներկայի հիմքում դրանք արտահայտել են տևական գործողություն, և այդ պատճառով էլ անցյալ կատարյալի հիմքում, որը վայրկենային գործողություն է արտահայտում, ընկնում են:

Հայ լեզվաբանական գրականության մեջ այն դրույթն է զարգացվում, որ հայերենը մեկընդմիջտ ջնջել է հնդեվրոպական կատարյալը (parfait), ինչպես նաև կրկնավոր ձևերը: Հայերենում ոչ կրկնավոր կատարյալից մնացել է 2 թայ՝ գոմ և գիտեմ: Գոմ-ը համապատասխանում է գոթ. was-ին, «եղել եմ», գիտեմ-ը՝ սանսկրիտ veda, հն. εοτδα, գոթ. wait թայերին:

Կրկնավոր կատարյալի միակ հետքը հայերենում արարի ձևն է²:

Գրաբարում ներկայի և անցյալ կատարյալի հիմքերից կազմվում են ինչպես թայի դիմավոր, այնպես էլ անդեմ ձևերը:

Ներկայի հիմքից կազմվում են սահմանական եղանակի ներկան, անկատարը, հրամայական եղանակի արգելականը, ստորադասական 1-ին ապառնին, անորոշ և ապառնի դերբայները, երթեմ նաև ենթակայական դերբայը:

Անցյալ կատարյալի հիմքից կազմվում են սահմանական եղանակի անցյալ կատարյալը, ստորադասական 2-րդ ապառնին, բուն և հորդորական հրամայականները, անցյալ մասամբ էլ ենթակայական դերբայները:

Վերջավորությունների համակարգը հայերենում պարզվել է: Հնդեվրոպական նախալեզվում ներկա և անցյալ ժամանակների գաղափարը արտահայտվում էր առաջնային և երկրորդային վերջավորությունների միջոցով: Հայերենում այդ բանը վերացել է, թեպետ այդ վերջավորությունների զգալի մասը ձևափոխված տեսքով պահպանվել է:

Հայերենի անցյալ ժամանակների վերջավորությունները զգալի փոփոխություններ են

¹ Հասկանալի է, որ ժամանակակից հայերենի գրեմ, կգրեմ ձևերի մեջ կատարյալ կերպը կերպ չի դրսևորում, քանի որ դրանք, ի տարբերություն գրաբարի, կազմված են ներկայի հիմքից:

² Տե՛ս Ա. Աճառյան, Լիակառար քերականություն, հ. 4-րդ, Ա գիրք, Եր., 1959, էջ 865—866: Թ. Ղարապոզյան, Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Եր., 1961, էջ 65:

կրել, այդ պատճառով էլ շատ ավելի դժվար է ճանաչել հնդեվրոպական հիմք-լեզվի երկրորդային վերջավորությունները, քան թե առաջնային վերջավորությունները:

Այժմ անցյալ կատարյալի հիմքի կազմության մասին խոսենք ավելի մանրամասնորեն: Անցյալ կատարյալի հիմքը 2 տեսակ է լինում՝ պարզ արմատական և բաղադրյալ: Ինչպես գիտենք, գրաբարում բայն ունի է, ա, ի, ու խոնարհումները, իսկ մեծ բայ՝ գոմ, պատկանում է ո խոնարհման: Այդ քոլոր խոնարհումների մեջ տարբերակվում են պարզ և ածանցավոր բայերը: Պարզ են կոչվում այն բայերը, որոնք կազմված են բայահիմքից և վերջավորությունից: Օրինակ՝ գր-եմ, գտ-ան-եմ, աղ-ամ, մեծ-ան-ամ, դատ-իմ, սկս-ան-իմ, թող-ում, զգ-են-ում:

Ինչպես նշեցինք, կատարյալի հիմքերը բաժանվում են 2 խմբի՝ պարզ-արմատական և բաղադրյալ:

Պարզ-արմատական է կոչվում այն հիմքը, որում բայարմատը հիմքի դեր է կատարում: Գրաբարում պարզ արմատական հիմք ունեն է և ի խոնարհման ածանցավոր, ու խոնարհման քոլոր բայերը, օրինակ՝ էլ-ան-եմ ել-, մտ-ան-եմ մուտ-, անց-ան-եմ անց-, արկ-ան-եմ արկ-, ուս-ան-իմ ուս-, մեռ-ան-իմ մեռ-, թող-ում թող-, թոչ-իմ թոչ-, կոր-նչ-իմ կոր-, հեղ-ում հեղ- և այլն:

Ե խոնարհման պարզ բայերից չորսն ունեն պարզ արմատական հիմք՝ հանեմ-համ, բերեմ-բեր, ածեմ-ած, հեղուսեմ-հեղուս:

Բաղադրյալ է կոչվում այն հիմքը, որում բացի բայարմատից հանդես են գալիս աջ, եայ մասնիկները: Բաղադրյալ հիմքերն իրենց հերթին կարելի է բաժանել երկու խմբի՝ ցույական և ի թույլ բաղադրիչ ունեցող:

Ցույական հիմք ունեն է և ի խոնարհման պարզ բայերը, ա խոնարհման քոլոր բայերը և ու խոնարհման որոշ բայեր: Օրինակ՝ երգեմ-երգեսց, սիրեմ-սիրեսց, նայեմ-նայեսց, բազմիմ-բազմեսց, աղամ-աղաց, գնամ-գնաց, բարձրանամ-բարձրաց, մոռանամ-մոռաց, զգեմ-զգեսց:

Ե խոնարհման 5 պարզ բայեր եայ-ի փոխարեն ստանում են աջ: Դրանք են՝ գիտեմ-գիտաց, մարթեմ-մարթաց, կարեմ-կարաց, մերկեմ-մերկաց, ասեմ-ասաց:

ՈՒ խոնարհման 6 ածանց ունեցող թվով 14 բայեր. այն է՝ քաղցնում, զարթնում, շըրտնում, ուտնում, ուռնում, պակնում, պչնում, սարտնում, ցածնում, ցասնում, այտնում, խափնում, հարթնում, մածնում, անցյալ կատարյալի հիմքում ստանում են ի թույլ բաղադրիչ, որը, հանդիպելով վերջավորության ա ձայնավորին, նրա հետ կազմում է -եա երկարաբառը կամ -եայ եռարարբառը վերածվում է ե-ի, օրինակ՝ զարթի+այ>զարթեսայ, պակի+այ>պակեսայ:

Հայերենի անցյալ կատարյալի կազմություններից արմատական կատարյալը համապատասխանում է նախալեզվի երկրորդային վերջավորություններով քնավոր (թեմատիկ) ձևերին և ավելի հին է, քան բաղադրյալը, որը, կազմվելով մեր լեզվի զարգացման ընթացքում, զնալով գերիշխող է դառնում և մոռացության տալիս նախնական արմատական ձևերը:

Հայերենի արմատական կատարյալը մի շարք համապատասխանություններ ունի այլ լեզուներում, օրինակ՝ էլիք=հն. ετιπε, եգիտ=սանս. óvidat: Կարելի է ասել, որ հնդեվրոպական լեզուների կատարյալի հիմքի հիմնական հատկությունները պահպանվել են արմատական հիմքերի մեջ:

Ծագման տեսակետից արմատական անցյալ կատարյալն իր մեջ ունի ինչպես կատարյալի (aoriste) նախնական ձևեր, այնպես էլ հին անկատարի ձևեր: Աճառյանը գրում է. «Հայերենը ստեղծելով հնչ. անկատարից քոլորովին անկախ մի անկատար, կարող էր հին անկատարը իրև aoriste գործածել: Նույնը կատարվել է սլավականում, ուր ստեղծվելով մի նոր անկատար, օրինակ՝ pada, pasti (ընկնել), բայի անկատարը padъ գործ էածվում իրև aoriste: Հայտնի է արդեն, որ հնչ.ում միայն մի տարբերություն կար անկատարի և aoriste-ի միջև. անկատարին ընկերանում էր նախնական վերջավորությամբ մի ներկա՝ նույն քնից, իսկ aoriste-ին՝ ոչ»³:

Գրաբարյան կատարյալի հնդեվրոպական ծագումը առանձնապես ցայտուն կերպով դրսևորվում է կատարյալի ե-ով կազմություններում:

Գրաբարը համարյա անաղարտորեն պահպանել է հնդեվրոպական լեզվի նախահավելվածը կամ աճականը (augmentum), որը հայերենից բացի կա նաև հունարենում և հնդիրանական լեզուներում:

Աճառյանը նշում է. «Այս օրենքը պահված է միայն արիական, հայ և հույն և թրակոփոյուզական լեզուների մեջ, հետևաբար կար նաև հնդեվրոպական նախալեզվի մեջ, բայց

³ Հ. Աճառյան, Աշվ. աշխ., էջ 857:

ընդհանուր գործածությունը չունեն, այլ հատուկ էր արևելյան քարքարոհն⁴: Այն դրվում էր Աշված լեզուների անցյալ ժամանակի եզակի և հոգնակի թվերի բոլոր դեմքերում: Հայերենը այս հարցում ևս յուրահատկություն է դրսևորում: Գրաբարում և աճականը դրվում է միայն անցյալ կատարյալի 3-րդ դեմքի միավանկ բառերի, ինչպես նաև գամ, դնեմ, տամ բայերի բոլոր դեմքերի վրա (բացառությամբ տամ-ի հոգնակի 1-ին դեմքի՝ տուաք):

Այստեղ բերում ենք գրաբարյան գամ, դնեմ, տամ բայերի սանսկրիտի ու մուճաբեճ կատարյալի խոնարհման համապատասխանությունները:

եզ. թ.	հոգ. թ.
գամ — եկի	— եկաք
— եկեր	— եկիք
— եկն	— եկին
դնեմ — եդի	— եդաք
— եդեր	— եդիք
— եդ	— եդին
տամ — էտու	— տուաք
— էտուր	— էտուք
— էտ	— էտուն
սանսկրիտ. եզ. թ.	հոգ. թ.
á—bharam	á—bharama
á—bharas	á—bharata
á—bharat	a—bharan
հունարեն եզ. թ.	հոգ. թ.
ε—φερον	ε—φερομεν
ε—φερες	ε—φερετε
ε—φερε	ε—φερω

Լրիվ հավանական կարելի է համարել այն դրույթը, որ սկզբում նախահավելվածը քնորոշ է եղել բոլոր դեմքերին, սակայն հետագայում պահպանվել է միայն եզակի երրորդ դեմքում: Դրա ապացույցն է հանդիսանում այն բանը, որ նախահավելվածը մնացել է մի շարք անկանոն բայերի միավանկ դեմքերում: Այսպես, դնեմ բայի անցյալ կատարյալը ճարկայացնում է հետևյալ պատկերը.

եզ. թ.	հոգ. թ.
եդի	եդաք
եդիր/եդեր	եդիք
եդ	եդին

Ստորադասական 2-րդ ապառնի ձևերն են.

եզ. թ.	հոգ. թ.
եդից	դիցուք
դիցես	դիշիք
դիցե	դիցեն:

Հայ լեզվաբաններից Ս. Ղազարյանը նշում է, որ «Գրաբարում այդ աճականը որևէ անհրաժեշտություն չէր ներկայացնում, նա կարող էր դրվել և չդրվել բայերի վրա, եթե միայն բայի արմատը մի հնչյունից կազմված չէր: Այդպիսի բայերի մեջ (եդ, էտ) հանդես է գալիս իբրև անհրաժեշտություն»⁵:

Իհարկե, կարելի է ասել, որ նախահավելվածը հայերենում քերականական իրապատեցումի, բայց հենց այն բանը, որ որոշ բայերի մեջ, որոշակի դեմքերում, նա անպայմանորեն պետք է հանդես գա, ինչպես եդի, եդիր, եդ, էտու, էտուր, էտ և այլն, ուրեմն չի կարելի ասել, թե «գրաբարում այդ աճականը որևէ անհրաժեշտություն չի ներկայացնում»:

Անջուշտ, կարելի է խոսել այն մասին, որ նախահավելվածը կարող է նաև հանդես չգալ, բայց այդ վերաբերում է եզակի 3-րդ դեմքի ձևերին, օրինակ՝ երթող կամ թռչող, էտե կամ առ և այլն: Բայց ինչ վերաբերում է այնպիսի ձևերին, ինչպիսիք են էտու, էտուր,

⁴ Նույն տեղում, էջ 276—277:

⁵ Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981, էջ 118—114:

ես, եզի, եղի, եղ, եկի, եկիր, եկն և այլն, չի կարելի ասել, թե և նախահավելվածը անհրաժեշտությունն չէ:

Հայերենի քերականություններում իրավացիորեն նշվում է, որ բաղաձայնով սկսվող միավանկ բայերը անցյալ կատարյալի եզակի 8-րդ դեմքում ստանում են և, իսկ ձայնավորով սկսվող բայերը՝ է նախահավելված:

Ինչպես նշում է Հ. Աճառյանը, հայերենում ձայնավորով սկսվող բայերը նախապես անական չեն ստացել, և էած, էօծ ձևերը ուշ շրջանի կազմություններ են⁶:

Հնդեվրոպական լեզվաբանության մեջ կա նաև այն կարծիքը, որ հնդեվրոպական բայանը ինքնին անցյալ ժամանակի գաղափար չէր տալիս, ուստի և նախահավելվածը դարձել է պարտադիր նշան անցյալ ժամանակի համար⁷:

Հետաքրքրական է այն փաստը, որ դեմք բայի ստորադասական 2-րդ ապառնին, ինչպես և անցյալ դերբայը կազմվում են և անականով, ինչպես եղից, եղեալ: Սա ամենայն հավանականությամբ բացատրվում է նրանով, որ ապառնին կազմվում է կատարյալից:

Ու խոնարհման պարզ և և խոնարհման ածանցավոր բայերի կատարյալի եզակի 8-րդ դեմքը համընկնում է եզակի հրամայականի հետ, օրինակ՝ բերեմ-բեր-բե՛ր, անցանեմ-անցա՛մ: Իման դեպքերում անականը հաստատ ցուցիչն է նրա, որ գործ ունենք անցյալ կատարյալի ձևի հետ, ինչպես՝ եքեր, էանց:

Հայերենում և անականը պահպանվում էր մինչև միջին դարերը: Ղափանցյանը նշում է, որ անգամ միջնադարյան ձեռագրերում այդ անականը դրվում էր ըստ համարանության⁸:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ դա իր հետքն է թողել հայերենի բարբառներում:

Ց-ով կատարյալ: Յուրական անցյալ կատարյալի ծագման վերաբերյալ կան բազմաթիվ տեսակետներ՝ Բուպի, Մյուլլերի, Տերվիշյանի, Հյուրջյանի, Քոմսոնի, Պեդերսընի, Մառի, Ղափանցյանի, սակայն ընդունվում է Մեյեի ստուգաբանությունը⁹:

Ըստ նրա, ցույական հիմքն առաջացել է հնդեվրոպական նախալեզվի *ske-ից: Ներկա ժամանակի մի շարք բայեր հնդեվրոպական լեզվում կազմվում էին այդ մասնիկով, և այդ «ներկա ժամանակի հիմ կազմություններից հայերենում առաջացել է անցյալ կատարյալի ցույական հիմքը:

Այսպես, օրինակ՝ հյ. հարցի ձևը կարելի է համեմատել սան. pcccháti, «հարցնում է», ալ. p̄arasaiti, լտ. posco («poresco-ից») «պահանջում են», հվգ. forscon «փնտրել» ձևերի հետ, որտեղ *ske/o ածանցով կազմվում է ներկան, այն դեպքում, երբ նույն ածանցով հայերենում կազմվում է անցյալի հիմքը¹⁰:

Պետք է ապացուցված համարել այն դրույթը, որ հին հայերենի բայի առաջնային վերջավորությունները ուղղակիորեն ծագել են հնդեվրոպական առաջնային վերջավորություններից: Իսկ ինչ վերաբերում է երկրորդային վերջավորություններին, ապա դրանք շագմաթիվ վեճերի ու տարակարծությունների առիթ են տվել: Մինչև օրս էլ այդ հարցում կան չլուսարանված ինչ-ինչ կետեր:

1) Անցյալ կատարյալի եզակի 1-ին դեմքի ի վերջավորության ծագման մասին կամ շագմաթիվ կարծիքներ:

Այսպես, Պեդերսընը գտնում է, որ անցյալ կատարյալի 1-ին դեմքի ի վերջավորությունը անկատարի եզակի 1-ին դեմքի ի-ի ազդեցության արդյունքն է¹¹: Գիտենք, որ այս ի վերջավորությունը ձայնավորից հետո դառնում է յ կիսաձայն (զոնցայ): Մեյեի և Բրուգմանի ենթադրությամբ կրավորաձև խոնարհման մեջ յ-ն (քերայ) ներգործաձև խոնարհման ի-ի (քեր-ի) փոփոխված տարբերակն է:

Որոշ լեզվաբաններ գտնում են, որ այս ի վերջավորության ծագումը անհայտ է¹²:

Ս. Ղազարյանը հսկանական է համարում այն կարծիքը, «ըստ որի անցյալի 1-ին դեմքի վերջավորությունը ծագումնաբանորեն կապվում է հնդեվրոպական բայի չեզոք սեռի եզակի 1-ին դեմքի -ai վերջավորության հետ, որը համեմատաբար ավելի լրիվ ձևով պահպանված է հունարենում, ինչպես φερεο-μαι «տարվում եմ, քերվում եմ», հին պրուս. asmi «եմ»: ... Այդ վերջավորությունը պահպանված է նաև մի շարք լեզուների երկրորդական վերջավորություններ ընդունող բայաձևերի մեջ i ձևով, ինչպես՝ սանսկ. akri «կատարեցի, արեցի»:

⁶ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 277—278:

⁷ Նույն տեղում, էջ 278:

⁸ Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, հին շրջան, Եր., 1961, էջ 285:

⁹ S. A. Meje, Введенже и сравнительное изучение индо-европейских языков, М.—Л, 1938, ст. 235.

¹⁰ Ք. Ղարազյուզյան, նշվ. աշխ., էջ 84:

¹¹ Պեդերսըն, Նպաստ մը հայ լեզուի պատմության, Վիեննա, 1904, էջ 26—28:

¹² Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 385: Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 284:

գրթ. 207-ի «աւսացի» և այլն: Հայերենը պահպանել է այդ վերջավորությունը ի ձևով՝ Ան- գործակերպ բայերի 1-ին դեմքում, բայց նույնությամբ պահպանվել է կրավորակերպ խո- նարհման բայերի եզակի և հոգնակի բոլոր դեմքերում¹³:

Գ. Ջահուկյանը գտնում է, որ «եզակի թվի 1-ին դեմքի (մասամբ և 2-րդ դեմքի) ի-ն, ամենայն հավանականությամբ ծագում է նախնական *e- ածանցից, որը նշանակում է իրավիճակ և որը դիտվում է հունարենի և սլավոններենի առիտստեղծում»¹⁴:

Ինչպես էլ որ մոտենանք հարցին, մի բան երևի պարզ է, որ անցյալ կատարյալի եզակի 1-ին դեմքի ի (յ) վերջավորության ծագման հարցը փաստորեն մնում է առկախ:

2) Հայագիտության մեջ ավելի հանգամանորեն է քննված անցյալ կատարյալի եզակի 2-րդ դեմքի ր վերջավորության հարցը: Այս վերջավորությունը հայերենում պահպանվել է անցյալ կատարյալի 2-րդ, անկատարի 2—3-րդ, ինչպես նաև եզակի հրամայականի որոշ ձևերում: Դժվար է ասել, թե այս բոլորը առաջացել են միևնույն ձևից, սակայն ըստ երե- վույթին դրանք իրենց ծագմամբ և գործառնությունով առնչվում են իրար հետ:

Բուպպի, Պետերմանի և Պատկանյանի կարծիքով, այս ր վերջավորությունը հանդիսա- նում է հնդեվրոպական s-ի հետագա ձևափոխությունը: Պեդերսընը եզակի 2-րդ դեմքի վերջավորությունը կապում է 2-րդ դեմքի դերանվան հետ:

Բրուգմանի և Մեյեի ենթադրությամբ կատարյալի եզակի 2-րդ դեմքի վերջավորությունը եզակի հրամայականի մի ձև է, որն էլ իր հերթին ծագել է *ra մասնիկից:

Հ. Աճառյանը¹⁵ և Գ. Ջահուկյանը¹⁶ ընդունում են Մեյեի տեսակետը, այն է՝ անցյալ կատարյալի ր վերջավորությունը իր ծագումով նույնանում է հրամայականի ր-ի հետ:

Սակայն կան լեզվաբաններ, որոնք չեն ընդունում այս վերջավորության հնդեվրոպա- կան ծագումը: Գ. Ղափանցյանը ր վերջավորությանը վերագրում է ուրարտական, արիամիկ ծագում¹⁷:

Սակայն ելնելով լեզվաբանության մեջ հանրահայտորեն ընդունված այն դրույթից, որ հայերենը հնդեվրոպական լեզու է, ուրեմն և չի կարելի հայերենի քերականական մասնիկ- ներին վերագրել ոչ հնդեվրոպական ծագում: Որպես ընդհանուր կանոն, հայերենի քերա- կանական ձևերը, մասնիկները պետք է լինեն սեփական ինքնագարգացման արդյունք:

3) Հայերենի անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքը ունի զրո կամ ւ վերջավորու- թյուն: Ներգործաձև խոնարհման դեպքում հիմքը հանդես է գալիս որպես վերջավորություն (գրեաց, աղաց):

Կրավորակերպ խոնարհման ժամանակ ւ վերջավորությունը հանդես է գալիս ա ձայ- նավորի հետ (գրեսա):

Ընդունված կարգի համաձայն՝ հայերեն ե/է նախահավելվածը կամ աճականը (aug- mentum) դրվում է միավանկ բառերի վրա, իսկ բազմաձևանկ բայերը, բացառությամբ մի քանի անկանոն բայերի, նախահավելված չեն ստանում: Օրինակ՝ եղի, եղիր (եղեր), եղ, եղաք, եղիք, եղին: Ջայնավորով սկսվող բայերն ունենում են է (եաձ, էօձ, էառ), իսկ բաղաձայնով սկսվող բայերը՝ ե նախահավելվածը (եզիտ, եհաս, եբեր): Ե-ով սկսվող բա- յերը նախահավելված չունեն (ել):

Եթե կանոնավոր բայերի եզակի 3-րդ դեմքի դիմավոր ձևը միավանկ է, այդ ժամանակ նախահավելվածն ավելանում է, օրինակ՝ բերի, բերեր, եբեր՝ համապատասխանելով սանսկ- րիտ á-bharat, հունարենի β-φ-ε-ρ-ε ձևերին:

Ինչպես արդեն նշել ենք, նախահավելվածի գործածությունը պարտադիր չէր:

Անցյալ կատարյալի ւ վերջավորությունն ունի հնդեվրոպական ծագում և իր տարրեր օրինակներն ունի մի շարք լեզուներում (թոխարերեն, խեթերեն, լատիներեն, սանսկրիտ):

Մեյեն ւ-ը համարում է հնդեվրոպական կատարյալի 3-րդ դեմքի u (-w-) վերջավորու- թյունից ածանցված մասնիկ:

Գ. Ջահուկյանը գտնում է, որ «w-ն ծագում է արիամիկ *u- (*-u-) ձևից, որը հանդես է գալիս տարրեր լեզուների պերֆեկտում (կատարյալում) և պրետերիտում (անկատար): Վեդ. jajīḥaw, լատ. no-vi-ի «ես իմացա», խեթ. hark-u-n «ես քոնել եմ», թիս. A-prak-wa, «ես հարցրեցի»¹⁸:

Այս հարցում ևս Գ. Ղափանցյանը չի ընդունում հնդեվրոպաբանների բացատրությունը:

¹³ Ս. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, Եր., 1961, էջ 387:

¹⁴ Գ. Джаукян. Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, с. 196:

¹⁵ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 365:

¹⁶ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 198:

¹⁷ Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 284—285:

¹⁸ Գ. Джаукян, նշվ. աշխ., էջ 197:

Նրա կարծիքով, «i-ը գալիս է ուրարտական ագիամիկ լեզվաշխարհից»¹⁹, և այն համեմատում է ուրարտական abi վերջավորության բայերի հետ: Ըստ նրա, «ուրարտական b-իմ հայերենում համապատասխանում է i»²⁰:

4) Անցյալ կատարյալի հոգնակի 1-ին դեմքն ունի աք վերջավորություն թե՛ ներգոյանն և թե՛ կրավորանն խոնարհումների համար: Բերաք համապատասխանում է սանկրիտի á-bhagata, հունարենի εφερομεν ձևերին: Ծատ հավանական է, որ հոգնակի 1-ին դեմքում եղել է մ, որի կորուստը պայմանավորված է համարանության ազդեցությամբ, ինչպես ստորադասական ապամիում ունենք քերցուք: Աք վերջավորության և ձայնավորի ծագումն անհայտ է:

Գ. Ջահուկյանը հարցը լուծում է հետևյալ կերպ. «Ա ձայնավորը հոգնակի թվի 1-ին դեմքի աք-ում կարելի է քացատրել ինչպես *e-, *ə-ի գրո ձայնաերանգավորման արտացում, թեպետ և այլ լեզուներում այդպիսի հնչյունափոխություն չկա (*ə-ն օգտագործվում է առանց փոփոխման, ք-ն այդ դեպքում հանդես է գալիս որպես հոգնակիության նույնպիսի ցուցիչ (<*s), ինչպես հոգնակի թվի 2-րդ դեմքի ք-ն (*jk<-te-s)»²¹:

5) Անցյալ կատարյալի հոգնակի թվի 2-րդ դեմքի վերջավորությունն է յք, որի ծագումը հնդեվրոպական է: Բերէք (կրավ. բերայք) ձևը համապատասխանում է սանկրիտի bhágrata, հունարենի φερετε ձևերին: Ք-ն հոգնակիության ցուցիչն է: Բացի էք վերջավորությունից, հոգնակի 2-րդ դեմքում գործածվում է նաև իք վերջավորությունը, որը ամենայն հավանականությամբ առաջացել է ավելի ուշ շրջանում:

6) Անցյալ կատարյալի հոգնակի 3-րդ դեմքի վերջավորությունն է ներգործակերպ՝ ին, կրավորակերպ՝ ան: Այս ձևը ծագում է *bheront հիմնաձևից: Հայերենում t-ն ընկել է, մնացել է միայն n-ն: Ի, և ձայնավորների ծագումն անհայտ է:

Ինչպես կարելի է եզրակացնել այս ամբողջ շարադրանքից, դժվարություններ չեն առաջանում միայն անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքի ու հոգնակի 1-ին դեմքի նախնական ձևերը վերականգնելիս: Մնացած դեպքերի դիմադրային վերջավորությունների ծագման հարցերը առիթ են տալիս տարբեր մեկնաբանությունների:

А. Г. АБАДЖЯН—Вопрос происхождения прошедшего современного в армянском языке.—В статье прослеживается индоевропейское происхождение этого времени в армянском на основе мнений ученых-языковедов.

¹⁹ Գ. Ղափաճցյան, *Աշխ.*, էջ 285:

²⁰ Г. Капанцян. К происхождению армянского языка, Ереван, 1946, с. 30.

²¹ Г. Джаукян, *Աշխ.*, էջ 196: